ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2015 թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 7-ի <<Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին>> N27-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում <<*մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ*>> բառերը փոխարինել <<*մարզպետի խորհրդական*>> բառերով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 2-ի N 34-Ն և 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 70-Ն հրամաններով նախատեսված պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջարանային բժշկական կազմակերպություններում սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրումը անհրաժեշտ է նախօրոք քննարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 7-ի N 27-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2015 թվականի փետրվարի 17
ք. Հրազդան